ՀԱՅ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆ ՀՈՒՆԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԻՆ

Մ.Ս.ԻՍՊԻՐՅԱՆ

Պատմական աղբյուրները վկայում են, որ հին հունական օլիմպիական խաղերին մասնակցել են նաև հայազգի մարզիկները: Օլիմպիական խաղերի մեզ հայտնի առաջին հայ մասնակիցն ու չեմպիոնը Տրդատ III Արշակունին է, որի կյանքն ու գործունեությունը մանրամասն նկարագրել է Ագաթանգեղոսը: Նրա մասին գրել են նաև Մովսես Խորենացին, Ղազար Փարպեցին, Փավստոս Բուզանդը, Եղիշեն: Տրդատ III-ի գործունեության տարբեր դրվագներին անդրադարձել են Մ.Զամչյանը, Հ.Մանանդյանը, Ս.Գլինկան, Վ.Բրյուսովը, Վ.Աբաղան և ուրիշներ:

Շատերի զարմանքը և տարակուսանքն է առաջացնում այն փաստը, թե ինչպես է հայ երիտասարդը կարողացել օլիմպիական խաղերի ըմբշամարտի մրցումներում հաղթել հնարամիտ, ուժեղ և փորձառու հույն մարզիկներին, որոնցից մի քանիսն արդեն իսկ օլիմպիական չեմպիոնի կոչում ունեին: Տրդատի հաղթանակն առավել ծանրակշիռ է դառնում, եթե նկատի ունենանք, որ մրցումները կայանում էին Հունաստանում՝ Օլիմպիայում, և գոտեմարտերը վարում էին հույն մրցավարները: Տրդատ III Արշակունու՝ օլիմպիական խաղերում տարած հաղթանակը մեծապես պայմանավորված էր նրանով, որ նա, ճակատագրի բերումով մանուկ հասակում տեղափոխվելով Հռոմ, իր նախնական դաստիարակությունը և կրթությունը ստացել էր այնտեղ, ուր վաղուց ի վեր գործում էր ֆիզիկական դաստիարակության և կրթության կայուն համակարգ:

Ագաթանգեղոսը գրում է, որ հայոց թագաժառանգ Տրդատին դայակները «փախուցեալ ի դուռն կայսեր ի կողմանս Ցունաց»[1]: Խոսրովի որդիներին դայակների կողմից օտար երկիր փախցնելը հաստատում է նաև Ղազար Փարպեցին[2]: Իսկ Մովսես Խորենացին այդ փաստը շարադրում է հետևյալ կերպ. «Ցորմէ զաղթեալ նախարարքն Հայոց, հանդերձ ազգաւն Արշակունեաց ի Ցոյնս ապաւինէին. յորոց մի էր և Արտաւազդ Մանդակունի, որոյ առեալ զՏրդատ որդի Խոսրովու՝ ի դուռն կայսեր հասուցանէր»[3]: Ագաթանգեղոսը վկայում է նաև, որ Տրդատը ուսում և դաստիարակություն է ստանում հայտնի զորավար կոմս Լիկիանեսի մոտ[4], որը տարիներ անց դարձավ կայսերակից՝ նախ Գալերիոս, ապա Կոստանդինոս կայսրերին:

Մ.Զամչյանը, ի մի բերելով հայ պատմիչների՝ Տրդատին Հռոմ փախցնելու մասին վերը թվարկված շարադրանքները, գրում է. «Ցայնմ ժամանակի մի ոմն ի նախարարաց Արտաւազդ անուն Մանդակունի առեալ զմանուկ մի յորդւոցն Խոսրովու թագաւորին Հայոց Տրդատ անուն՝ փախեաւ ի կողմանս տերութեան Հռովմայեցւոց, և հասոյց ի Կեսարիա. և անդ սնուցանէր զնա. և անտի առեալ

---

[1] Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Ե., 1983, էջ 32:
[2] Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Ե., 1982, էջ 9:
[3] Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Պատմութիւն Հայոց), Տփղիս, 1913, էջ 215:
[4] Ագաթանգեղոս, էջ 33:

տարաւ զնա ի Հռովմ. ուր և ի չափ հասեալ Տրդատայ՝ եկաց ի դրան կայսեր...»:

Տրդատը Լիկիանեսի մոտ ծառայելու տարիներին զբաղվում էր զինավարժությամբ, ձիավարժությամբ, ըմբշամարտով, ուսանում էր ռազմական արվեստ, հանդես էր դալիս կրկեսի մրցումներում, ապա նաև հին հունական օլիմպիական խաղերում[5]: Նկարագրելով Տրդատի ռազմական և մարզական կարողությունները՝ Մովսես Խորենացին գրում է. «...Նախ ի մանկութենն յերիվար կամակար աշտանակեալ, և կորովի ձիավարեալ, և զէնս շարժեալ յաջողակաբար, և այլ պատերազմականս ուսանել ախորժակս. ապա ըստ Պեղոպոնէսացւոց մեհենական հրամանին Հիպիտեայ ի մրցանակս ագոնին առաւելեալ քան զԿղիտոստրատոս Հռոդացի, որ զվզէ ևեթ կալեալ յաղթէր. դարձեալ և քան զԿերասոս արգիացի, զի նա զկճղակ եղին թափեաց. իսկ սա զերկուց ցլուց վայրենեաց միով ձեռամբ կալեալ զեղջերէն, թափեաց հանդերձ ընդվզեալ ջախջախմամբ: Եվ ի ձիընթացս մեծի կրկիսին կառավարել կոմեցեալ՝ ի հմտութենէ հակառակորդին ոստուցեալ յերկիր անկաւ, և բուռն հարեալ արգել զկառն. ընդ որ ամենքին զարմացան»: Հիպիտեսը եղել է «Հունաստանի կառավարիչը, որին վերագրվում է օլիմպիական խաղերը սահմանելը: Այստեղ հիշատակված ըմբիշները՝ Կլետոստրատոս և Կերասոս... հիշատակված են Եվսեբիոսի ժամանակագրության մեջ, որից և վերցրել է Խորենացին»[8]:

Տրդատի գերազանց ըմբշամարտիկ լինելը հաստատում է Ագաթանգեղոսը՝ գրելով հետևյալը. «Հասեալ ի դուռն Արշակունւոյ, որ քան զամենայն նախնին քաջ եղեալ՝ զանցոյց արութեամբք, որ ըմբշամարտ սկայազօր քաջութիւնս գործեաց ի մարտս պատերազմաց»[9]: Եվ ապա՝ «Իսկ թագաւորին (Տրդատը – Մ.Ի.) որ այնչափ անուանի եղեալ՝ քաջութեամբ առաւելոյր ի մարտս պատերազմացն. նաև և յՈղիմպիադն Ցունաց հսկայազօր երևեալ, բազում գործս արիութեան և անդ ցուցեալ, և ոչ սակաւ մզեալ պատերազմունս յայնկոյս Եփրատ գետոյ ի կողմանս Տաճկաց. ուր և կարեվէր խոցեալ՝ ելանէր երիվարաւն ի պատերազմէն. իսկ նորա առեալ զերիվարն, և զասպազէն նորին և զիւր զառնազէնն առեալ կապեալ ի Թիկունսն՝ ի վերայ մկանանցն ի լիւղ անցանէր ընդ գետն Եփրատ. արդ որ այնչափ հզօր զօրավորն էր և բուռն ոսկերօք...»[10]: Ասվածից պետք է եզրակացնել, որ Տրդատը ռազմական կրթություն ստանալուն զուգընթաց զբաղվել է նաև ըմբշամարտով և, հին հունական օլիմպիական խաղերի մրցումներում հաղթելով բոլոր ուժեղագույն ընդիշներին, հռչակվել էր օլիմպիական խաղերի չեմպիոն:

Եթե նկատի ունենանք Տրդատի դեռևս մանուկ հասակում Հայաստանից տեղափոխվելու տարեթիվը, զինավարժություններով, ֆիզիկական վարժություններով և սպորտով զբաղվելու ժամանակահատվածը, կրկեսներում անցկացվող զազանամարտերի մրցումներին մասնակցելու ժամանակը, նրա ամրակուռ երիտասարդ լինելու փաստը, ինչպես նաև հին հունական օլիմպիական խաղերի անցկացման տարիները, ապա կարելի է եզրակացնել, որ

---

[5] Մ.Զամչեանց, Հայոց պատմութիւն, հ. Ա,Ե., 1985, էջ 368:
[6] Ս.Հարությունյան, Հայ հին վիպաշխարհը, Ե., 1987, էջ 83:
[7] Պատմութիւն հայոց, էջ 217, 218:
[8] Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Ե., 1990, ծանոթագրություններ Ս.Մալխասյանի, էջ 274:
[9] Ագաթանգեղոս, էջ 16:
[10] Նույն տեղում, էջ 116:

Տրդատը, ամենայն հավանականությամբ, հին հունական օլիմպիական խաղերի ըմբշամարտի մրցումներում չեմպիոն է հռչակվել 281թ. կայացած 265-րդ օլիմպիական խաղերում: Իսկ քանի որ Տրդատի հոր՝ Հայոց թագավոր Խոսրովի սպանությունը տեղի է ունեցել 261թ., որի ժամանակ Տրդատը մոտ 2 – 3 տարեկան էր, ապա 281թ. օլիմպիական հաղթողի դափնեպսակը նվաճելիս նա մոտ 22 – 23 տարեկան, ֆիզիկապես կոփված և մարզված երիտասարդ էր, և այդ հասակում օլիմպիական չեմպիոնի կոչումը նվաճելն առավել հավանական է: Նկատենք, որ Տրդատի՝ Հռոմ տեղափոխվելու տարեթվի, այդ պահին նրա տարիքի և Հայոց թագավոր կարգվելու ժամանակի վերաբերյալ առկա են տարբեր տեսակետներ, որոնք արմատապես չեն տարբերվում միմյանցից: Եղիշեի վկայությամբ՝ Տրդատին Հռոմի կայսրությունն էին տեղափոխել տղայության հասակում՝ նրան ազատելով «ի հայրասպան մարդախողխող հօրեղբարցն իւրոց»[11]:

Օլիմպիական խաղերի չեմպիոն Տրդատը շարունակում էր ծառայել Լիկիանեսի մոտ, երբ գոթերը հարձակվեցին Հռոմի վրա: Կատարելով կայսեր հրամանը՝ Լիկիանեսը Տրդատի և իր զորագնդի հետ շտապեց հասնել պատերազմի վայրը: Քաջ գիտենալով Տրդատի գերբնական ուժի մասին՝ կոմս Լիկիանեսը նրան ներկայացրեց կայսր Դիոկղետիանոսին: Որոշվեց, որ Տրդատը, ծպտվելով Հռոմի կայսեր արքայական հագուստներով, պետք է մենամարտի գոթերի թագավորի հետ: Ագաթանգեղոսի վկայությամբ՝ կայսրը «Հրամայեաց արկանեալ ծիրանիս. և զարդարեցին զՏրդատիրոս ի զարդ կայսերական, արկեալ զնովաւ զնչան թագաւորութեանն. և ոչ ոք գիտէր վասն նորա. հրաման ել ամենեցուն, թէ ինքն իսկ կայսրն իցէ: Եւ նորա առեալ զգունդն զօրաց բազմութեան՝ ի ձայն փողոյ տագնապաւ յառաջ մատուցանէր մինչև յանդիման թշնամեացն:

Իբրև յանդիման եղեն միմեանց կայսերակերպն և թագաւորն՝ մտրակ ի կուշտ արարեալ երիվարացն ի միմեանս հասանէին. անդ յաղթահարէր կայսերակերպն զթագաւորն. ձերբակալ արարեալ՝ ածեալ յանդիման առաջի կայսերն կացուցանէր: Ցայնժամ մեծացոյց յոյժ թագաւորն զՏրդատիրոս, և մեծամեծ պարգևս ետ նմա. թագ կապեաց ի գլուխ նորա և ծիրանեօք զարդարեալ մեծացոյց զնա, և կայսերակերպն զարդու չքեղացուցեալ մեծարեաց զնա. և զումարեաց ի ձեռս նորա զօրս բազումս յօգնականութիւն նմա, և արձակեաց յիւրական աշխարհ Հայոց»[12]:

Այդ մասին Սեբեոսը գրում է. «Ցամի Ի-երորդի Արտաշրի, հնգետասաներորդի Դիոկղետիանոսի, կայսերակերպ չքեղությամբ Տրդատիրոս ելանէ ախոյան ընդդեմ արքային Գղաց: Եւ անդէն ձերբակալ արարեալ զախոյեանն անարի զթագաւորն Գղաց՝ ածեալ կացուցանէ յանդիման կայսերն Դիոկղետիանոսի. և անդէն ի նմին ամի թագաւորեցուցանէ Դիոկղետիանոս զՏրդատ ի վերայ աշխարհիս Հայոց»[13]: Տրդատի հզոր ֆիզիկական ուժի և Հայաստանի թագավոր կարգվելու մասին գրել են նաև Ներսես Շնորհալին, Ուխտանեսը և ուրիշներ[14]:

Նշանակալից է, որ հենց Տրդատ Մեծի թագավորության օրոք՝ 301թ., քրիստոնեությունը առաջինը Հայաստանում ընդունվեց որպես պետական կրոն,

---

[11] Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, Ե., 1989, էջ 144:
[12] Ագաթանգեղոս, էջ 35 – 39:
[13] Պատմութիւն Սեբէոսի, Ե., 1979, էջ 58:
[14] Ներսիսի Շնորհալւոյ Հայոց կաթողիկոսի Բանք չափաւ, Վենետիկ, 1830, էջ 583, Ուխտանէսի եպիսկոպոսի Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 82:

իսկ Տրդատ Մեծը, ավելի ուշ, դասվեց հայ սրբերի շարքը և անվանակոչվեց Սուրբ Տրդատ Մեծ[15]:

Տրդատ III-ի կողմից օլիմպիական խաղերի չեմպիոնի կոչումը նվաճելուց 104 տարի անց՝ 385թ., կայացած 291-րդ օլիմպիական խաղերի՝ բռնցքամարտիկների մրցումներում հաղթողի դափնեպսակ է նվաճել նույն Արշակունյաց տոհմի մեկ այլ ներկայացուցիչ՝ Վարազդատ Արշակունին: Վարազդատի մասին առաջին ստույգ տեղեկությունները հաղորդում է Մովսես Խորենացին: Նա գրում է. «Բայց Աւգոստոս բարեացապարտն Թէոդոս որ և Մեծ, ի քսաներորդ ամին իւրում թագաւորեցոյց Հայոց փոխանակ Պապայ զՎարազդատ ոմն ի նմին տոհմէն Արշակունեաց: Այս Վարազդատ էր տիրվք մանուկ, սրտեայ, անձնեայ, ուժեղ, լի ամենայն գործովք արութեան, և յոյժ կորովի նետաձգութեամբ: Որ ի ժամանակի ի փախստենէն Շապուհոյ գնացեալ ի դուռն կայսեր նահատակեցաւ, նախ ի Պիսաս զբռնամարտիկսն յաղթելով. դարձեալ յԱրեգ քաղաքի Ելլադացւոց յօր հասարակի կոտորեաց առիւծս, յորում փառս Ողոմպիայ խաղուն հանդիսի յըմբշամարտկացն երևի և յարգի»[16]: Վարազդատին Հայոց թագավոր նշանակելու և նրա՝ Արշակունի լինելու փաստերը հաստատում է նաև Փավստոս Բուզանդը, որը գրում է. «Եւ եղև յետ մահուան Պապայ թագաւորին Հայոց. թագաւորեցոյց թագաւորն Յունաց զՎարազդատ ոմն ի նմին տոհմէն Արշակունի ի վերայ աշխարհին Հայոց»[17]: Այնուհետև, ամրապնդելով իր կարծիքը՝ Փավստոս Բուզանդը նշում է. «Իսկ Վարազդատ թագաւորն պատգամ յղէր պատասխանոյն առ զորավարն Մանուէլ, և ասէր. Եվ քանզի եմ Արշակունի, զի եդի զթագ նախնեաց իմոց Արշակունեացն, և կալաք զաշխարհն առաջնոց իմոց, և խնդրեցի զվրէժ հօրեղբօրն իմոյ Պապայ ի չարագործ յեղբօրէն քումմէ ի Մուշեղայ»[18]:

Վարազդատի ֆիզիկական մեծ ուժի և օլիմպիական խաղերի բռնցքամարտի մրցումներում տարած հաղթանակի մասին Մ.Չամչյանը գրում է. «Ընդ որս և Վարազդատ ոմն Մանուկ Արշակունի դնացեալ ի Կոստանդնուպօլիս՝ եկավ ի դուռն արքունի. ուր և եցոյց բազում գործս քաջութեան... Սա յորժամ ի յոյնս էր, արար բազում քաջութիւնս. և յոլիմպիական խաղս յաղթեաց բազում բռնամարտկաց»[19]: Օլիմպիական խաղերի բռնցքամարտի մրցումներում Վարազդատի հաղթանակը ամրագրված է «Օլիմպիական խաղեր» գրքում[20]:

Հին Հայաստանի թագավորական և նախարարական տոհմերում պատանիների և երիտասարդների ֆիզիկական դաստիարակությունը կրում էր կազմակերպված բնույթ: Նրանց ուսուցանում էին զինվորական վարժություններ ու խաղեր, ծանրամարտ, ըմբշամարտ, բռնցքամարտ, լող, նիզակի նետում, մարզական խաղեր, նետաձգություն, ձիավարություն և այլն: Եվ միանգամայն բնականոն են հնչում Մովսես Խորենացու վերը բերված այն խոսքերը, որ Վարազդատը «տիրվք մանուկ, սրտեայ, անձնեայ, ուժեղ, լի ամենայն գործովք արութեան և յոյժ կորովի նետաձգութեամբ»:

Հռոմեական կայսրությունում ապրած տարիներին Վարազդատը մարզվել և մասնակցել է կրկեսներում անցկացվող գազանամարտերին, ապա

---

[15] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ե., 1968, էջ 94, 102:
[16] Պատմութիւն Հայոց, էջ 307 – 308:
[17] Փավստոս Բուզանդ, էջ 356:
[18] Նույն տեղում, էջ366:
[19] Մ. Չամչեանց, նշվ. աշխ., էջ 461 – 462, 471:
[20] The Olympic Games, Athens, 1982, p. 296.

Հունաստանի Էլիս նահանգի Պիսա քաղաքում հաղթող է ճանաչվել բռնցքամարտիկների մրցումներում, իսկ այնուհետև հասել է մարզական կյանքի ամենախոշոր հաղթանակին՝ նվաճելով օլիմպիական խաղերի չեմպիոնի պատվավոր կոչումը: Գրականության մեջ Վարազդատի՝ օլիմպիական չեմպիոն դառնալու տարեթվի և հաղթած մարզաձևի վերաբերյալ կան իրարամերժ կարծիքներ: Ս.Հարությունյանը, Վ.Պլատոնովը և Վ.Գուսկովը սխալմամբ կարծում են, որ Վարազդատը հաղթանակ է տարել ոչ թե բռնցքամարտի, այլ ըմբշամարտի մրցումներում[21], իսկ Ա.Մովսիսյանը և Ա.Գալուստյանը գրում են, որ Վարազդատը օլիմպիական խաղերի չեմպիոն է դարձել հնգամարտից: Վերջինիս պնդմամբ՝ «Վարազդատը հին հնգամարտում բազմիցս հաղթանակներ է տարել»[22]: Սակայն հանրահայտ է, որ Վարազդատը մեկ անգամ է մասնակցել հին հունական օլիմպիական խաղերին և բնականաբար չէր կարող բազմիցս հաղթանակներ տանել և այն էլ հնգամարտում: Որոշ հեղինակներ էլ գտնում են, որ Վարազդատը օլիմպիական խաղերի չեմպիոն է դարձել 291-րդ օլիմպիադայում՝ 384թ.[23]: Այս վարկածը հերքվում է այն պարզ պատճառով, որ մեր թվարկության բոլոր օլիմպիական խաղերն անց են կացվել կենտ թվականներին, իսկ 291-րդ օլիմպիական խաղերը ամենաստույգ տվյալներով կայացել են 385թ.: Որոշ հեղինակներ էլ հակված են կարծելու, որ Վարազդատը հայոց թագավոր է եղել 374 - 378թ., իսկ օլիմպիական խաղերի չեմպիոն է դարձել 278-րդ խաղերում, որը համապատասխանում է 372 - 374թթ.[24]: Այն, որ Վարազդատ Արշակունին Հայոց թագավոր է եղել 374 - 378թթ., հաստատվում է անժխտելի պատմական փաստերով, իսկ որ նա իբր օլիմպիական չեմպիոն է դարձել 278-րդ խաղերում (372 - 374թթ.), չի համապատասխանում իրականությանը: Ինչպես հայտնի է, հայոց թագավոր Վարազդատի և Մանվել Մամիկոնյանի հակամարտությունը և ճենամարտն ավարտվում են վերջինիս հաղթանակով և Վարազդատի «փախուստով դեպի կայսրության սահմանները»[25]: Փավստոս Բուզանդը, մանրամասնորեն նկարագրելով Վարազդատի և Մանվելի մենամարտը, գրում է, թե ինչպես Մանվելը «զնիզակն յինքն հանէր յարքայեն: Եվ արքայն Վարազդատ ի փախուստ դառնայր յերեսաց զօրավարին Մանուէլի...: Եվ զթագաւորն Վարազդատ հալածեցին ի յերկրէն ի սահմանացն Հայոց. չօգաւ գնաց ի երկիրն Ցունաց. անդ եկաց որչափ և եկաց, և անդէն մեռաւ»[26]: Հարցի ճշգրտման վրա

---

[21] Ս.Հարությունյան, նշվ. աշխ., էջ 147, В.Платонов, С.Гуськов, Олимпийский спорт, кн. 1, Киев, 1994, с. 74.

[22] А.Галустян, История физической культуры в древней Армении (Очерки по истории физической культуры, вып. IV, М., 1949, с. 163).

[23] Գ.Բուտաև, Ց.Սիմոնյան, Ֆիզիկական կուլտուրայի պատմություն, մասն Ա, Ե., 1956, էջ 110, Վ.Մարտիկյան, Օլիմպիական կրակի շուրջը, Ե., 1973, էջ 270, П.Соболев, Олимпия, Афины, Рим, М., 1960, с. 27.

[24] Ս.Զորյան, Երկերի ժողովածու, հ. 9, Ե., 1983, էջ 470, Կ.Աթոյան, Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հնագույն ակունքները Հայաստանում, Ե., 1985, էջ 257 - 260:

[25] Հայ ժողովրդի պատմություն, հ. II, Ե., 1984, էջ 108:

[26] Փավստոս Բուզանդ, էջ 365 - 373:

լույս է սփռում Հունաստանի Օլիմպիա ավանի օլիմպիական թանգարանում ցուցադրվող, դարերի խորքից մեզ հասած հուշագիրը, ուր աղյուսակաձև, վերից վար նշված են օլիմպիական խաղերի թվերը, դրանց անցկացման տարեթվերը, օլիմպիական խաղերի չեմպիոնների անունները և նրանց երկրների անվանումները: Այդ հուշագիրը տեղեկացնում է, որ հին հունական օլիմպիական 291-րդ խաղերում, որը կայացել է 385թ., օլիմպիական խաղերի չեմպիոնի՝ օլիմպիոնիկեսի, կոչումը նվաճել է Հայաստանցի Վարազդատը:

Այսպիսով, պարզվում է, որ Վարազդատ Արշակունին 385թ. կայացած հին հունական 291-րդ օլիմպիական խաղերի բռնցքամարտիկների մրցումներում օլիմպիական խաղերի չեմպիոնի պատվավոր կոչումը նվաճել է Հայոց թագից զրկվելուց 7 տարի անց:

Վարազդատի թագավորի քաջությունը և բարի գործերը Մովսես Խորենացին հանձնարարել է նրա անվանի նախնու՝ Տրդատ Մեծի հետ: Վարազդատի մասին նա գրում է. «Այլ որ առ ազգին Ղանկուարտացն նորա արութիւնքն քաջութեան՝ համարձակիմ ասել հաւասար սրբոյն Տրդատայ.

Որ եկեալ թագաւորութեամբ յաշխարհս մեր ի յիսուն և հինգ ամին Շապհոյ, – շարունակում է Խորենացին, – առաջին մարտին պատահեաց աւազակաց ոմանց Ասորւոց ի դժուարս Դարանաղւոյ, և փախստեայս արարեալ՝ հետամուտ լինէր: Իսկ նոցա անցեալ ընդ նեղուցս կամրջին Եփրատայ՝ ընկեցին զփայտն զկնի իւրեանց. այլ նորա հասեալ՝ վազեաց զԵփրատաւ առաւել քան զղակոնացին Քիոնեայ վազն քսան և երկուց կանգնոց չափ: Եվ անդ էր տեսանել նոր զոմն Աքիլլա ընդ Սկամանդրոս գետ վազելով: Ցորմէ զարհուրեալ աւազակացն զէնընկէց լինելով ի ձեռն եկին»[27]: Պատմահայրը Վարազդատի թագավորության ժամանակահատվածը և ավարտը այսպես է նկարագրել. «Ցաղագս որոյ արքեալ ի մանկութեանն արութիւնս, առ այսոքիւք և ի թագաւորութեանն ոչ հնազանդ էր խրատու վերակացութեանս զօրացն Ցունաց: Իսկ կայսրն Թէոդոս հրամայեաց զնա ունել, եթէ ոչ իւրովք կամօք երթիցէ ի կոչ ինքնակալին: Վասն որոյ հարկեալ երթայ կամօք իւրովք, յուսացեալ ի սուտ հանել զԱւդոստոսն: Իսկ կայսրն և ոչ տեսութեան արժանի արար, այլ երկաթի կապանօք ետ տանել զնա ի Թուղիս կղզի Ովկիանու. որ թագաւորեաց ամս չորս»[28]:

Հնագույն ժամանակների օլիմպիական խաղերի հաղթողներն արժանանում էին մեծ հարգանքի և պատվի. օլիմպիական մի շարք չեմպիոններ անգամ դարձել են իրենց պետությունների թագավորներ, իսկ երբեմն նաև թագավորներն են ձգտել նվաճելու օլիմպիական խաղերի հաղթողների դափնիները: Օլիմպիական խաղերի առաջին չեմպիոն Տրդատ III Արշակունին օծվեց Հայոց թագավոր: Տիբերիոսը (մ.թ.ա. IVդ.) հետագայում դարձավ Հռոմի կայսր[29]:

Հիմնվելով Ե.Կեսարացու «Ժամանակագրության» վրա՝ Վ.Մարտիկյանը, Կ.Աթոյանը և Ա.Մովսիսյանը փորձում են ապացուցել, որ հին հունական օլիմպիական խաղերին ոչ միայն մասնակցել, այլև հաղթել են մի քանի հայ մարզիկներ: Ա.Մովսիսյանը գրում է, որ «Տիգրան II-ը մեծ տեղ էր տալիս զինվորական կրթությանը: Տիգրանը, որ դեռ մանուկ հասակից սովորեց Հունաստանում, մասնակցում էր օլիմպիական մրցումներին և շատ անգամ

---

[27] Պատմութիւն Հայոց, էջ 308:
[28] Նույն տեղում, էջ 309:
[29] Словарь античности, М., 1989, с. 543.

հաղթող էր հանդիսանում»[30]: Վ.Մարտիկյանը նույնպես գրում է, որ Տիգրան II-ը «Հունաստանում ուսանելու տարիներին, ինչպես բոլորը, զբաղվել է մարմնակրթությամբ: Հենց ուսման տարիներին՝ էլ Տիգրանը պետք է մասնակցած լինի օլիմպիական հանդեսներին: Դա համապատասխանում է 170 կամ դրան նախորդող ու հաջորդող խաղերից որևէ մեկին: Տիգրանը հանդես է եկել մենամարտի որևէ ձևում»[31]:

Վ.Մարտիկյանը, հիշատակելով Եվսեբիոս Կեսարացու «Ժամանակագրությունը», նշում է, թե վերջինս, նկարագրելով առաջինից մինչև 247-րդ օլիմպիական խաղերը, առանձնացրել է խաղերի հաղթողներին, նրանց երկիրը և խաղերի թիվը: Եվսեբիոս Կեսարացին հիշատակում է Արշակ անունով մի մարզիկի. «Սա առաջին թագաւորեաց Արշակ ի Պարթևաստանե, ուստի և Արշակունիք»[32]: Կ.Աթոյանը գտնում է, որ հին հունական օլիմպիական խաղերին Վարազդատից բացի մասնակցել են Տիգրան II-ը, Արշակ I-ը և Տրդատ III-ը[33]: Սակայն Տիգրան Երկրորդի՝ օլիմպիական խաղերի չեմպիոն լինելու հանգամանքը անընդունելի է, քանի որ մինչև հայոց թագավոր դառնալը (մ.թ.ա. 95թ.) նա պատանի հասակից պատանդ էր Պարսկաստանում: Եթե նկատի ունենանք, որ Տիգրանը ծնվել է մ.թ.ա. 142/141թ., ապա Պարսկաստանից վերադառնալիս և հայոց թագավոր կարգվելիս նա արդեն 46-47 տարեկան էր[34], որը միանգամայն անհավանական տարիք է օլիմպիական չեմպիոն դառնալու համար:

Փաստացի տվյալներ չկան այն մասին, որ պարթևների կողմից Տիգրան II-ին պատանդ վերցնելուց առաջ կամ պատանդ եղած ժամանակ նա մեկնել է Հունաստան կամ մասնակցել օլիմպիական խաղերին: Ավելին, հայոց թագավոր կարգվելուց հետո նա պարբերաբար պատերազմի մեջ էր նաև Հռոմի հետ և նման պայմաններում, մանավանդ պատկառելի հասակում չէր կարող մասնակցել օլիմպիական խաղերի:

Չի բացառվում, որ հին հունական օլիմպիական խաղերին մասնակցել է Արտավազդ III-ը, որը ըստ Մ.Նեյմանի, «Արտավազդ II-ի որդին էր և հայոց թագավոր էր մ.թ.ա. I դարի վերջում», իսկ մինչ այդ «մոտ քառորդ դար պատանդ էր Հռոմում»: Հնարավոր է, որ օլիմպիական խաղերին մասնակցել է նաև Արտավազդ II-ը:

Արտավազդ II-ի դիմանկարով դրամի մյուս երեսի վրա հունարեն գրված է. «Արքայից արքայ Արտաւազդի» և նկարված է մի քառաձի երկանիվ մարտակառք, որը վարող Արտավազդին պսակ է տալիս հաղթանակի դիցուհին»[35]: Քառաձի երկանիվների, մրցության մասնակցելը և հաղթանակի դիցուհու կողմից հաղթողի պսակ ստանալը ապացույց է այն բանի, որ Արտավազդ II-ը, իրոք, հաղթանակ է տարել այդ մարզաձևում և եթե ոչ օլիմպիական խաղերում, ապա այլ շատ կարևոր մրցումներում:

---

[30] Ա.Մովսիսյան, Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության, Ե., 1958, էջ 473:
[31] Վ.Մարտիկյան, նշվ. աշխ., էջ 280:
[32] Նույն տեղում, էջ 277 – 279:
[33] Կ.Աթոյան, Ռազմա-սպորտային մենամարտեր Հայաստանում, Ե., 1965, էջ 185 – 190:
[34] Վ.Մանանդյան, Տիգրան Երկրորդը և Հռոմը, Ե., էջ 26, 28, 241:
[35] Մ.Գավուքճյան, Հայ ժողովրդի ծագումը, Մոնթրեալ, 1982, էջ 105:

Այնուհանդերձ, ուղղակի ապացույցներ, որ վերը թվարկված կամ այլ հայ մարզիկներ մասնակցել են հին հունական օլիմպիական խաղերին, ներկայումս չկան: Դրանք լուրջ հետազոտման և ապացուցման կարիք ունեն:

УЧАСТИЕ АРМЯНСКИХ СПОРТСМЕНОВ В ДРЕВНИХ ОЛИМПИЙСКИХ ИГРАХ

М.С. ИСПИРЯН

Резюме

Древние армянские историки Агатангелос, Мовсес Хоренаци, Фавстос Бюзанд и другие утверждают, что спасая жизнь младенца Трдата Аршакуни, его увозят в Римскую империю, где под началом князя Ликианеса он занимается военными упражнениями и борьбой. Здесь же в Риме Трдат получает военное образование и становится чемпионом по борьбе 65-ых древних Олимпийских игр, состоявшихся в 281г. Впоследствии Трдат, по указу Рима, становится царем Армении.

Спустя 104 года, в 385г., на 291-ых древних Олимпийских играх Вараздат Аршакуни тоже становится чемпионом по боксу.

Сведения о других армянах, участвовавших в древних Олимпийских играх, нуждаются в дополнительном исследовании.